

ԺՈՂՈՎՐԴԱ-ԽՈՍԱԿՅԱԿԱՆ ՏԱՐԵՆՑԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ
«ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» ՎԵՊՈՒՄ

Ռ. Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ

Հայն կտավի գործերը (վեպ, վիպակ), բացի իրենց այլևայլ հատկանիշ-
ներից, բնութագրվում են նաև գործող անձանց, հերոսների բազմաթիվա-
կությունով: Այս հանգամանքը շատ կողմնորոշվում է հեղինակի լեզվա-
կան ատաղձը, նրան հնարավորություն տալիս լեզվական միջոցներով բնու-
թագրելու հերոսներին, ստեղծելու ժամանակի և միջավայրի գունավորում:
Ընդհանուր առմամբ, հեղինակի լեզուն դիտվում է որպես մի ինչ-որ շեղոք
բան, որը հակադրվում է հերոսների ոճավորված խոսքին:

«Երկիր Նախիր»¹ վեպում Չարենցը հանդես եկավ իբրև հասուն արձա-
կագիր, որը տիրապետում է արձակի բարդ առանձնահատկություններին:
Թվում է, թե արդեն ձևավորված բանաստեղծը արձակագրի դերում հանդես
գալով, անպայմանորեն պիտի նախընտրեր քնարական արձակը: Սակայն
վեպում հեղինակային լեզուն ունի երկու տարբեր որակ՝ բուն հեղինակային
խոսք և հեղինակի ոճավորված խոսք:

Առաջին դեպքում գործ ունենք հեղինակի «շեղոք» ոճի հետ: Սա վեպի
այն լեզվական ատաղձն է, որը հանդիպում է քնարական և այլ կարգի շեղում-
ներում, ուր անմիջականորեն հանդես է գալիս հեղինակը: Ըստ երևույթին այս
հանգամանքն է պատճառը, որ մի շարք գրականագետներ² իրավացիորեն տես-
նում են կառուցվածքային ընդհանրություններ Աբովյանի «Վերքի» և Չարեն-
ցի «Երկիր Նախիր» միջև: Երկու վեպերում էլ հեղինակներին ազատ կերպով
կարելի է համարել գործող անձ, քանի որ նրանք հանդես են գալիս իրադար-
ձություններին տրվող հուղական-գաղափարական գնահատականներով: Այս
հարցում Չարենցը Աբովյանից տարբերվում է թերևս նրանով, որ առավել
աննկատ է նրա միջնորդությունը. ավելին, հեղինակը թաքնվում է հեզանքի
շղարշի ետևում, ուստի հաճախ դժվար է լինում որսալ նրա մեկնակետը, դիր-
քորոշումը: Բնորոշ է, որ նման հատվածներն առավելագույն չափով են են-

¹ Նախիր բառը գերադասելինք զրել առանց չ-ի, թեև բոլոր մեջբերումները կատարված
են Չարենցի երկերի ակադեմիական հրատարակության 5-րդ հատորից, ուր բառը բերված է
«Նայիրի» ձևով: Նույն այդ հատորում ղեկավարված է վեպի ինքնագրից մի էջ, ուր սլարդ երևում
է, որ հեղինակը այդ բառը դրել է ավանդական ուղղագրությամբ: Հետագա հրատարակությու-
ններում այն դարձել է «Նայիրի» (Աբեղյանի ուղղագրական ուղղորմի համաձայն): Պահում ենք
այդ բառի գրության հեղինակային ձևը:

Առանց հատուկ նշումի կատարված ընդգծումները մերն են:

² ՏԼՍ, օրինակ, Ս. Աղաբաբյան, «Երկիր Նախիր» վեպը (սեղիշե Չարենցի ստեղ-
ծագործությունը» հոդվածների ժողովածուի մեջ, Երևան, 1957): Է. Դ. Զրբաշյան, Չարենցի
բիրիտորաֆիան (Առաջարան), Երևան 1959: Հ. Բ. Բաբաջյան, Խոհեր Չարենցի ճանա-
պարհի մասին (Պոեզիան պատմական քառույթներում» ժողովածուի մեջ, Երևան, 1971):

թարկված հեղինակի պատկերային մտածողության ընդհանուր սկզբունքին. հեղինակի լեզուն առավել բանաստեղծական է, հարուստ գեղարվեստական տարբեր արտահայտչամիջոցներով:

«Վաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, երբ ես զբաղված եմ լինում առօրյա հոգսերով, կամ անգամ երբ ես տարված եմ լինում գինու կամ կնոջ հմայիչ հաճույքով, — ներսը, սրտիս խորքում, զոդի պես զգույշ, կամացուկ շարժվում է նա: Ինչպես վաղուց տրված մի խոստում, կամ ինչպես ժամանակին չվճարած պարտամուրհակ — ծանրանում է սրտիս, անողոր — ուտում է սիրտս» (էջ 10):

Քննենք, թե լեզվական ինչ միջոցներով է պայմանավորված այս հատվածում պատկերային մտածողությունը: Երկու անգամ կրկնելով «վաղուց» բառը և երկրորդ նախադասությունը սկսելով դարձյալ նույն բառով, հեղինակը խոսքին տալիս է զգացմունքային երանդ: Դրան մեծապես նպաստում են նաև փոխաբերությունները. «Մտորում է... մի անհուն ցանկություն», «Ելք է փնտրում կուտակված մի կարոտ» (սրանցում վերացականը օգտագործված է թանձրացական իմաստով), «Ուտում է սիրտս» և այլն: Նույն դերն են կատարում նաև հետևյալ համեմատությունները. «Գոդի պես զգույշ», «Ինչպես վաղուց տրված խոստում», «Ինչպես ժամանակին չվճարված պարտամուրհակ»: Մեծ դեր են խաղում նաև գեղարվեստական մակդիրները («անհուն ցանկություն», «հմայիչ հաճույք», «կուտակված կարոտ»):

Բերենք բուն հեղինակային լեզվից վերցված մի այլ հատված, ուր նախադասությունների հակիրճ ու սեղմ կառուցվածքը, յուրահատուկ ուժիմը հիշեցնում են բանաստեղծ Չարենցի լեզուն:

«Վարագույրները քաշել էր ու նստել կիսախավարում. լուռ էր. գլուխը ցավում էր մի քիչ. ուղեղում պարապություն էր այդ օրը՝ անգո մի մշուշ, բաց տարածություն: Կտրվել էին կարծես օրերն ու տարիները. հատվել էր ինչ-որ բան Համո Համբարձումովի ռուղեղում. այդ օրը ուղեղում, ինչպես ասացինք, մշուշ էր թափանցիկ, բաց տարածություն: Բայց այդ բաց տարածությունը երբեմն-երբեմն սկսում էր լցվել. կարծես քնած էր արթմնի ու, արթմնի երազում, տեսնում էր տեսիլներ...» (էջ 199):

Նշված հատվածը կարելի է ներկայացնել նույնիսկ չափածո գրությամբ (կտրատված տողերով), ելնելով նրա ներքին ուժիմից, չխոսելով արդեն գեղարվեստական արտահայտչաձևերի յուրահատուկ երանգավորման մասին, որը հիշեցնում է Չարենցի՝ չափածո երկերին հատուկ մտածողությունը:

Սակայն վեպում անհամեմատ շատ են այն դեպքերը, երբ հերոսների խոսքը անմիջականորեն չի մեջբերվում, այլ վերապատմվում է: Սրանով պետք է պայմանավորված համարել վեպի ոճի յուրահատկությունը, որը «Երկիր Նաիրին» ոճական առումով մերձեցնում է Գոգոլի «Մեռած հոգիներին»:

Վերաշարադրելով որևէ հերոսի խոսքը՝ հեղինակը դրա մեջ դնում է նաև ի՛ր շեշտը, ի՛ր վերաբերմունքը: Այս երևույթը նկատվել է նաև Չարենցի նախորդ շրջանի երկերում: Մասնավորապես դա նկատելի է «Ամենապոեմում», ուր հեղինակը Նաիրին անվանելով «հզոր», «անսասան» կամ Համադասպին՝ «քաջ», «ջանբեզար» և այդ մակդիրները դնելով չակերտների մեջ՝ զգացնել է տալիս, որ դա ինքը չի ասում, այլ ուրիշները, դրանով բնութագրելով նաև

այդ «ուրիշներին»։ Հեղինակային խոսքի նման տարբերակը սովորաբար անվանվում է հեղինակի ոճավորված խոսք։

Վնայում ընկեր Վառդգյանի խոսքը հեղինակը ուղղակիորեն չի բերում։ Նրա մտքերը բերված են երրորդ դեմքով, բայց պարզ զգացվում է, որ դա՝ Վառդգյանի խոսքն է։

«Եվ նա երկար ժամանակ չի ների իրեն ոչխարային այդ վախը, այդ ամոթաբեր թուլությունը, որ սև բիծ կարող է դնել ամեն մի իսկական հեղափոխականի անկաշառ խղճին։ Փառք աստծու, որ այդ մասին գոնե ոչ ոք չգիտե. ընկ. Վառդգյանը խոսք է տվել իրեն, որ այդ սև արատը մի օր լվանա իր խղճից մի իսկական հեղափոխական գործով...» (էջ 37)։

Այս հնարանը հեղինակին թույլ է տվել խուսափելու միօրինակությունից, առավել բաղմաղան դարձնելու վնայի ոճական ատաղձը և իբրև գրող՝ թափանցելու հերոսի ամենանրբին մտքերի ու ապրումների մեջ։ Երրորդ դեպքերում էլ խոսում է հեղինակը, բայց որքան արագ փոխվում է նրա մտածելակերպը, բառապաշարը, ոճը։

Ահա թե ինչպես է պատմում Օսեփ Նարիմանովը իր կյանքի ամենանշանավոր իրադարձության մասին։

«Հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովը, որ ապրում է Գեներալ Ալոշի պալատ-բնակարանի ներքևի հարկում, սիրում է պատմել ակումբում—նրա, Գեներալ Ալոշի ներկայությամբ, թե ինչպես նահանգապետը, առաջին անգամ Գեներալ Ալոշի բնակարանը մտնելիս բարեհաճել է այն կարծիքը ղայտնել, որ այդպիսի մի ճաշակավոր բնակարան պատիվ կարող էր բերել... նույնիսկ Պետերբուրգին, այո՛, անգամ Պետերբուրգին...» (էջ 42)։

Ընդգծված հատվածը Օսեփ Նարիմանովի խոսքն է, իսկ մնացածը լիովին բնութագրում է նահանգապետին, որը խոսում է իշխանավարի, վերից նայելով բոլորին։ Իսկ կրկնությունը (նույնիսկ Պետերբուրգին, այո՛, անգամ Պետերբուրգին) խոսակցական կենդանի երանգ է հաղորդում նահանգապետի խոսքին։

Ջարենցը ոճավորված խոսքին դիմում է հերոսներին բնութագրելու նպատակով. իր ներքին խոսքով հերոսը բացահայտում է ինքն իրեն։ Ահա Օսեփ Նարիմանովի «ինքնաբնութագիրը». «Նա չի սիրում գործերը ձգձգել՝ զգնում է պաշտոնական եռուղեոցի։ Օսեփ Նարիմանովն այդպիսի մարդ չէ և չի էլ ուզում լինի։ Եթե նա հնարավորություն ունենար և մի քիչ էլ ֆիզիկականը ներեր— ամենամեծ ուրախությամբ կթողներ քաղաքն էլ, հաշտարար դատավորի պաշտոնն էլ և որևէ մի գյուղ կտեղափոխվեր՝ երկրագործությամբ զբաղվելու» (էջ 43)։

Թերևս ոչ մի հնարանը հեղինակին հնարավորություն չէր տա այսպես ցայտուն բնորոշելու իր հերոսին։ Մաղութի Համոն ևս բնութագրված է հեղինակի ոճավորված խոսքի միջոցով. «Քաղաքացիների կողմից նա, Մաղութի Համոն, ամենայն պատրաստակամություն հայտնեց մինչև վերջին կարիլ աբյուր կռվելու՝ հանուն Գանի և Հայրենյաց» (էջ 91, ընդգծումը հեղինակինն է— Ռ. Ս.)։

Հեղինակը նախադասության վերոհիշյալ մասն ընդգծել է իմաստն առավել շեշտելու, ընթերցողի ուշադրությունը հատկապես դրա վրա բևեռելու համար, թեև անուղղակիորեն ընդգծված է հերոսի խոսքը։ Այժմ էլ ընկնում հեղինակի միտումը՝ հերոսին բնութագրելու լեզվական միջոցներով ու լեզ-

վամտածողությամբ: «Մինչև վերջին կաթիլ արյունը» չափազանցված արտահայտությունը հատուկ է հոետորական խոսքին ու ոճին, իսկ «հանուն Գահի և Հայրենյաց» գրաբարյան արտահայտություն է: Բացի այդ, այս արտահայտությունն ուներ իր կոնկրետ կիրառությունը հին Հայաստանում, ինչպես նաև ցարական Ռուսաստանում: Այնպես որ, այն իր մեջ ունի նաև ժամանակաշրջանի և միջավայրի գունավորում ստեղծելու ակնհայտ ձգտում: «Գահի և Հայրենյաց» գրելով մեծատառով՝ Չարենցը ղգացնել է տալիս նաև հերոսի վերաբերմունքը այդ հասկացությունների նկատմամբ: «Հայտնի է և այն, որ նա, Մազութի Համոն, արտասահմանից «Դրոշակ» է ստանում և գաղտնի կերպով տարածում ժողովրդի «ստորին խավերում» (էջ 49): «Ահա թե ինչու ոչ մի քաղաքացի չի համարձակվում յողանալ կամուրջի մոտերքը. բանի-բանի անգամ եղել են դեպքեր, երբ մի առափնի. խելոք, բարի նաիրցի գիշեր ժամանակ Վարդանի կամուրջի մոտերքից անցնելիս ղգացել է հանկարծ, որ բաշում են իրեն վար...» (էջ 21, ընդգծումները հեղինակինն են—Ռ. Ս.):

Առաջին մեջբերման մեջ պարզ կերպով ղգացվում է, որ «ստորին խավերում» բառերը, որոնք հեղինակը միտումնավոր ընդգծել է, հեղինակինը շեն: Նույնը երկրորդ մեջբերման մեջ. մեր ընդգծած «առաքինի, խելոք, բարի» մակդիրները ոչ թե հեղինակի բնութագրումն են, այլ այդպես է մտածում գավառական քաղաքի միամիտ բնակիչը: Մի այլ դեպքում (էջ 32), երբ հեղինակը հինգհարկանի շենքն անվանում է «բարե ակնածանք», «առասպելական շինություն», գործ ունենք նույն հնարանքի հետ. այս անվանումների մեջ ըդգացվում է միամիտ գավառացու մտածելակերպը:

Իր խոսքը ոճավորելիս հեղինակը դիմում է բաղմաղան միջոցների: «Նաիրցի վարպետները պահած են եղել հաղար փութ դինամիտ» (էջ 35):

Ժողովրդական խոսքին բնորոշ այս չափազանցությունն ակնարկում է, որ այդ ամբողջ պատմությունը ասեկոսե է, որ շրջում է ժողովրդի մեջ: Մի այլ դեպքում (մի բանի տող վարը) Չարենցը այլ հնարանք է օգտագործում. նա մի արտահայտություն է մեջբերում, որը նախադասության մնացած մասի հետ ոճական միասնության մեջ չէ: «Իսկ հայտնի պանդոկապետ Բոչկա Նիկոլայը, նա, որ հանրամատչելի դուխան է պահում Լորիս-Մելիքյան փողոցի վրա, ասել է...» (էջ 35):

«Դուխան» բառը, ինչպես նաև «դուխան պահել» դարձվածը, որը հատուկ է ժողովրդական լեզվին, խստորեն առանձնանում է հեղինակի՝ դարձվածներից զուրկ լեզվից, ընդգծելով, որ դա «ուրիշն» է ասում:

Ինչպես տեսանք, Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպում հեղինակային լեզվի հրկու տարատեսակները (բուն հեղինակային լեզու և հեղինակի ոճավորված խոսք) էապես տարբերվում են միմյանցից, ուստի նրանցից յուրաքանչյուրը կրնանք առանձին:

* * *

Գեղարվեստական երկի լեզվի և ոճի ուսումնասիրությունից անհնար է անջատել նրա բառապաշարի քննությունը: Յուրաքանչյուր հեղինակ գրում է համաժողովրդական լեզվով, սակայն նրա անհատական ոճը պայմանավորված է նրանով, թե համաժողովրդական լեզվի որ շերտերից է նա օգտվում կամ ի՞նչ համամասնությամբ է օգտագործում այդ շերտերը: Մի գրողի լեզ-

վում կարող են իշխել ժողովրդական լեզվամտածողության տարրերը, մի այլ գրողի լեզվում դրանք կարող են առավել նվազ քանակություն կազմել, տեղի տալով այլ տարրերի: Ժողովրդական-խոսակցական տարրերը ասելով՝ նկատի ունենք բարբառներից, խոսակցական լեզվից գրական լեզվի փոխառած բառերն ու բառակապակցությունները, քերականական ու հնչյունական տարբեր ձևերը, դարձվածները, թեմատոր խոսքերն ու առած-ասացվածքները, որոնք ակնհայտ կերպով ժողովրդական ծագում ունեն: Սրանք խստորեն հակադրվում են հնաբանություններին ու գրքային բառերին, քանի որ ժողովրդական տարրերը խոսքին տալիս են թարմություն ու կենդանություն, առանձնահատուկ համ ու հոտ: Անշուշտ չպետք է մոռանալ, որ լեզվի ժողովրդախոսակցական տարրերի կիրառությունը մեծապես կախում ունի ստեղծագործության թեմատիկայից, արծարծվող նյութից ու նպատակից: Որքան որ անբնական է պատկերացնել վերամբարձ, գրքային լեզվով գրված որևէ ժողովրդական տեսաբան, գյուղական կյանքի նկարագրություն, նույնքան էլ անբնական է հակառակը՝ քաղաքային կյանքը կամ մտավորականի խոհերն ու խոսքը ժողովրդա-խոսակցական որոշակի գունավորում ունեցող լեզվով արտահայտել: Ուստի սխալ է բոլոր դեպքերում լեզվի ժողովրդայնությունը՝ իբրև առավելություն, իսկ նրա բացակայությունը՝ իբրև թերություն դիտել: Բազմաթիվ հայ գրողներ, այդ թվում նաև Եղիշե Չարենցը, տվել են վերն ասվածի լավագույն ասացույցները: Այստեղ պետք է կատարել մի վերապահում ևս. եթե ասվածը վերագրենք արձակ երկերին կամ այն ստեղծագործություններին, ուր կա հեղինակի ու հերոսի խոսք, ապա բնական է, որ մեր խոսքը վերաբերում է հեղինակային լեզվին: Հերոսների խոսքին տրվող չափանիշները այլ են, ուստի դրանք պետք է քննել առանձին:

Բուն հեղինակային լեզվում ժողովրդա-խոսակցական տարրերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում այն բառերը, որոնք գրական լեզվում ունեն իրենց համարժեքները (անշուշտ իմաստային և ոչ ռճական առումով), սակայն հեղինակը պերադասել է օգտագործել դրանց ժողովրդական ձևերը կամ գրական բառերի զանազան կարգի հնչյունափոխությունների ենթարկված տարբերակները, հարադիր և կրկնավոր բարդություններով արտահայտված ձևերը: Այսպես, օրինակ, նման հատվածներում հեղինակը մերկ բառի փոխարեն գերադասում է օգտագործել տվյալ, գեր բառի փոխարեն՝ շաղ, եղջյուր բառի փոխարեն՝ պոզ կամ կոահնել բառի փոխարեն պերադասում է «գլխի ընկնել», վախչել, նողմալի բառերի փոխարեն՝ պուկ տալ և այլն:

Այդ շարքին են պատկանում նաև օտար ծագում ունեցող (մեծ մասամբ արևելյան լեզուներից՝ թուրքերենից, պարսկերենից, արաբերենից եկող) բառերը, որոնք ևս պետք է համարել ժողովրդական լեզվի բառապաշարին բնորոշ, քանի որ գրական լեզվի մեջ դրանք մտել են ոչ թե անմիջականորեն տվյալ լեզուներից, այլ բարբառներից: Ինչպես, օրինակ, արաղ, քաս, դահլիճ, շայ, մեյդան, գյուլ, աշալ, ֆեֆ, դոխտուր և այլն: Բերենք ժողովրդական ծագում ունեցող բառերի նմուշներ, որոնք հանդիպում են հեղինակի լեզվում. Գրվանքա (55), սապոնոտ (63), արաղահամ (63), էլ (67), շաղ (88), ոնց (93), դահրումար (184), մուժ (187), պուկեր (191), տկլոր (205), քեֆ (220), հնչ (249), պուկ տալ (256), կողբե-կողբ (258) և այլն:

Հեղինակային լեզվում հանդիպող այս բառերը հնարավորություն են տալիս ստեղծել ընթերցողի հետ մտերմիկ ու անկաշկանդ զրույցի սլաքներ,

ուր հեղինակի լեզուն հնարավորին չափ մոտեցված է առօրյա-խոսակցական լեզվի արտահայտչաձևերին:

Նկարագրելով, թե ինչպես պարոն Մարութեն մտնում է վարսավիր վա-սիլի վարսավիրանոցը, հեղինակը գրում է. «Աչքերը փակում ու, ծուլլ, փափ-կաթոռի մեջ ընկղմած, սպասում է, մինչև տաք, կակուղ խոզանակը, սապո-նոտ սահելով՝ քսվի դեմքին և իր այտերի վրա շոգ, տաք՝ զգա վարսավիր վասիլի առաղաճած շնչառությունը» (էջ 63): Մի այլ տեղ համեմատաբար ավելի խոսակցական երանգ ունեցող «սալիւրիչ» բառը հակադրելով «վաբսա-վիր» գրքային բառին՝ հեղինակը հասնում է հերոսի հոգեբանության բա-ցահայտման: «Աբոմարշի հարեանը սափրիչ է. չէ. եվրոպական վարսավիր, ինչպես հայտարարված է նրա ցուցանակի վրա» (էջ 56):

Հեղինակային լեզվի ժողովրդայնությանը մեծապես նպաստում են նաև ժողովրդական բառընկալմամբ կազմված այն բառերը, որոնց բաղադրիչները գրական են, սակայն ամբողջությամբ վերցրած՝ մատնում են իրենց ժողովրդ-դական ծագումը: Օրինակ. կողակից (191), տղոցկան (260), շինություն (32), կերպարանք (209), հարսնացու (76), անբան (248), մայր-բաղաք (29) — փոխանակ ընդունված մայրաֆաղափի, տրաքտրաքոց (264), հրհրոց (260), հարայհրոց (210) և այլն:

Հեղինակի լեզվում որոշ տեղ գրավում են նաև բնաձայնական-նմանա-ձայնական, ինչպես նաև զանազան փոքրացուցիչ-փաղաքշական մասնիկներով կազմված բառերը: Ահա դրանցից մի քանի նմուշ. ճպճպալ (78), ծընգում էր (82), ցածիկ (187), փսփսուկներ (212), մանրիկ (230), լղրճուկ (230), նըս-տուկ (191),

Վերջապես, հարկ է նշել որոշ բարբառային-ժողովրդական քերականա-կան ձևեր, որոնք ներթափանցել են հեղինակի լեզվի մեջ: Դրանք անշուշտ ունեն ռճական արժեք և նպաստում են հեղինակի լեզվի ժողովրդական երան-գավորմանը: Օրինակ. հեղինակը մութ, գիշեր բառերը օգտագործում է ի հո-լովմամբ՝ փոխանակ մրան, գիշերվա առավել գրական ձևերի: «Մքի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, երբ ես զբաղված եմ լինում առօրյա հոգսերով...» (էջ 10):

Մի այլ դեպքում շոգի բառը հանդիպում է շոգիի ձևով. «Լուռ էր, տոթ ու հանգիստ. լսվում էր վարսավիրի դանդաղ շնչառությունը — ու գու, կպչող, բա-ղանիքի շոգիի նման խեղդող ալիքներով քսվում էր վասիլի շնչառությունը պ. Մարութի դեմքին» (էջ 96):

Ի հոլովման ազդեցությամբ պետք է բացատրել նաև արդի հայերենում ան հոլովման պատկանող (ուվ-ով վերջավորվող բառեր) բառերի գործիակա-նի բ վերջավորության փոխարեն ով վերջավորության գործածությունը: Օրի-նակ. «Ուրախ էր, ընդհանուր առումով, ամբողջ Լորիս-Մելիքյանը՝ կւյարա-նից մեյդան» (էջ 103):

Անշուշտ այս օրինակում մեծ դեր ունի նաև այն հանգամանքը, որ հեղի-նակը շեղվել է «ընդհանուր առմամբ» քարացած կապակցությունից, այլապես «առումով» ձևը այլ կապակցություններում տարածված է (օր. այս առումով): Իսկ մի այլ տեղ (էջ 28) «Զարքնումի սկզբնավորում» կապակցության մեջ հանդիպում ենք նույնատիպ բառերի սեռականին:

Նույնարժեք շեղումներ են գրական լեզվից նաև այն բառաձևերի կիրառությունները, ուր գործ ունենք բառերի՝ բարբառից եկող բերականական և հնչյունական փոփոխությունների հետ. «...Դեպի քաղաքն են իջնում քաղաքի երբեմնի պարիսպների հիմիկվա մնացորդները» (էջ 19), «Այդպիսի հասարակություն շատ սակավ էր հավաքվում, տաբեներ մի-երկու անգամ հազիվ էր հավաքվում քաղաքի ակումբներում» (էջ 151), «Բայց պ. Մարտիրեն այդ բանը չաբավ...» (էջ 88), «Բայց, ի մեծ դարմանք իրա, սիրտը չպաղեց...» (էջ 100), «...Քաղաքի փողոցներում երևաց, դինվորականի շորերով և շապի-րած, բուրբուճած դեմքով... Կարո Դարայանը» (էջ 198)։

Վերոհիշյալ օրինակներում բոլոր ընդգծված բառերը շեղումներ են գրական լեզվից։

Ն և չ սոսկածանցավոր բայերի կատարյալի հիմքի կազմության ժամանակ ժողովրդական լեզվին հատուկ է սոսկածանցի պահպանումը (սղվելու փոխարեն) և ներգործածվելը ժողովրդությունը՝ կրավորակերպի փոխարեն։ Այսպես, օրինակ, Չարենցը բուսավ ձևի փոխարեն գործ է ածում բուսնեց ձևը (էջ 159)։ Բաղմաթիվ բարբառներում շատ ընդհանրացած է նաև չ սոսկածանցի փոխարինումը ն-ով, ինչպես, ասենք, կալչել-կալենել, դիպչել-դիպենել և այլն։ Վեպում, հեղինակի լեզվում հանդիպում է «բոնեւ» ձևը (էջ 111)։

Հեղինակն օգտագործում է նաև Բ հոգնակիակերտով կազմված ֆաղափագի բառը (էջ 220), որը բացահայտ ժողովրդական երանգավորում ունի, քանի որ առկա է ֆաղափացիներ գրական ձևը։ Բառի ստացական հոգնակին ևս ծաղումով ժողովրդական բնույթ ունի, ուստի «շուրներդ» բառաձևը ևս մըտ-ցրնում ենք այս շարքի մեջ. «Երևակայեցեք, ընթերցող, որ մի առավոտ վեր եք կենում ձեր տեղից և ուզում եք շուրներդ հագնել...» (էջ 253)։

Չարենցի հեղինակային խոսքում հանդիպում են նաև գրական լեզվի նորմաներից որոշակի շեղումներ։ Այսպես, շատ հաճախ հեղինակը եղանակավորող կոչված բայերի հետ (ուղենալ, մոռանալ, դժվարանալ, փորձել և այլն) անորոշ դերբայի փոխարեն օգտագործում է բայի ըղձականի ձևերը, ինչպես, օրինակ՝ «...Բայց, ինչ գնով էլ լինի, ուզում է տեղ հասցնի...» (էջ 78), «Նրա սրճարանը ավելի բան լիքն էր լինում հիմա. դժվարացնում էր հարցնի» (էջ 105), «...Բայց հենց որ ուզում եմ բռնեմ, տեսնեմ մարմնավոր, կանգնեցնեմ հաստատ,— կորչում է...» (էջ 11), «Ուզում եմ ասած լինեմ...» (էջ 22), «Եվ դեռ այն էլ մոռացա ասեմ, որ բացի վերոհիշյալ հրաշքներից՝ նախրյան արքաներ կան թաղված...» (էջ 29)։

Գրական լեզուն սրանց փոխարեն պահանջում է անորոշ դերբայ լրացում. «Ուզում է տեղ հասցնել», «Դժվարանում էր հարցնել» և այլն։ Որքանով ձիշտ կլինի այս ձևերը անկանոնություն, շեղում համարելը։ Ռ. Իշխանյանը, համաձայն երևույթ նկատելով Ակսել Բակունցի ստեղծագործություններում, գրում է. «Այսպիսի կապակցության հաջող կիրառությունը հարկ եղած դեպքերում շատ է կենդանացնում գեղարվեստական խոսքը։ Դժվար է համաձայնվել այն բանասերների հետ, որոնք անվերապահորեն մերժում են ստորոգյալի և նրան լրացնող բայի այսպիսի «դիմավոր» կապակցության օգտագործումը գրական լեզվում։ Մինչդեռ հենց նման դեպքերում է, որ պետք է հաշվի առնել գեղարվեստական գրականության լեզվի առանձնահատուկ կողմերը և դրանց համաձայն ավելի անկուն ու լայն պատկերացնել աբղի հայերենի փերականական կանոններ հասկացողությունը։ Հիշյալ ձևերը, թերևս, ան-

հարմար լինեն գիտական դրականության լեզվի մեջ, բայց, ահա, երբեմն շատ անհրաժեշտ են գեղարվեստական խոսքում»³։

Տվյալ երևույթին Ռ. Իշխանյանի տված գնահատականին սկզբունքորեն համամիտ լինելով, միաժամանակ շենք կարող չնշել մեր վարանումը նրա այն դրույթի նկատմամբ, որ նման շեղումների հիման վրա պետք է վերանայել «արգի հայերենի քերականական կանոններ հասկացողությունը»։ Ինչ խոսք, լեզվի զարգացման ընթացքում բազմաթիվ շեղումներ ի վերջո վերածվել են օրինաչափության, սակայն լեզվի զարգացման այն փուլում, երբ դրանց շեղում լինելը դեռևս գիտակցվում է, կարելի է արդարացնել այս արտահայտությունների սոսկ ունական տարբեր կիրառությունները, մի բան, որ ի վերջո, առաջարկում է նաև Ռ. Իշխանյանը, դրանք համարելով ընդունելի սոսկ զեղարվեստական խոսքում։

Հեղինակային լեզվում հանդիպող յուրաքանչյուր կարգի շեղում սովորաբար դիտվում է գրական լեզվի տվյալ (այսինքն հեղինակի ժամանակակից) փուլի համադրությամբ։ Ձարենցի հեղինակային խոսքում բազմիցս հանդիպում ենք ըղձական (և նրանից կազմվող պայմանական ու հարկադրական) եղանակներով գրված բայերի եզակի երրորդ դեմքի ե (ե) վերջավորության, փոխանակ այսօրվա ի-ի։ Օրինակ՝ «Ինչ ուզում է պ. Մարուքեն կառնե...» (էջ 17), «Գիտենա էլ—ի՞նչ պիտի անե...» (էջ 53), «...Որ երեկոյան հանգիստն այնտեղ վայելե» (էջ 76), «Կալաումն, ծաղրելով, կալաումն երևի իր բոլոր ծանոթներին...» (էջ 98), «...Կենտրոն, որ սովթաններ, շահեր և կայսրեր պիտ տապալե» (էջ 34), «...Պիտի լիզե նորից Հավիտենական Հիվանդի հորդաների ոտները...» (էջ 256)։

1920-ական թվականներին, երբ Ձարենցը գրում էր «Երկիր Նաիրին», այս ձևերը համարվում էին ճիշտ և գրական, ուստի այսօր դրանք սոսկ մատնանշում են լեզվի այն ժամանակվա վիճակը։ Հանդիպում են նաև ի-ով ձևեր, որոնք ցույց են տալիս, որ այդ թվականներին արդեն առկա է ավանդախախտումը։ Այսպես, 21-րդ էջում հանդիպում է նաև «պետք է հիշի» ձևը։ Ըստ երևույթին, մահացող (ե-ով) ձևի լայն կիրառությունը վեպում մասամբ պայմանավորված է նաև Կարեն բարբառի ազդեցությամբ։

* * *

Հեղինակային խոսքի մյուս տարատեսակը, որն անհամեմատ ավելի մեծ տեղ է գրավում վեպում, հեղինակի ոճավորված խոսքն է։ Նման դեպքերում թեև խոսում է հեղինակը, սակայն վերամարմնավորման մի զարմանալի կարողությունը նա թափանցում է յուրաքանչյուր հերոսի հոգին, խոսքի միջոցով տալով նրա մտածելակերպը։ Բնական է, որ այս դեպքում բուն հեղինակային լեզվի և հեղինակի ոճավորված խոսքի միջև կլինեն բառապաշարային, քերականական, բառակազմական և այլ կարգի տարբերություններ։ Հեղինակը իր խոսքը ոճավորելիս նմանակում է այս կամ այն հերոսին, օգտագործում բառեր ու քերականական ձևեր, որոնք բուն հեղինակային լեզվում չեն հանդիպում (թեև ընդհանրություններն էլ քիչ չեն)⁴։

³ Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965, էջ 104—105 (ընդգծումը հեղինակինն է—Ռ. Ս.)։

⁴ Պետք է նշել, որ վեպում միշտ չէ, որ հեշտությամբ կարելի է սահմանադատել բուն հեղին-

Ժողովրդական-բարբառային ծագում ունեցող բառերի թվում պետք է նշել այն բառերը, որոնք թեև գրական լեզվում ունեն իրենց փոխարինիչները, սակայն հեղինակը դրանք օգտագործում է իր խոսքը հերոսների մտածելակերպին առավել մոտեցնելու համար, ինչպես օրինակ՝ ծախել (51), փուշ (123), ժաժք (35), քացի (236), բռի (264) և այլն: Կարևոր դեր ունեն նաև այն բառերը, որոնք վերը անվանեցինք օտար ծագում ունեցող, սակայն բարբառների կողմից որդեգրված. փութ (35), դուքան (35), արաղ (51), սապոն (52), քաշալ (71), մանեթ (103), դուշ (233), հայվարա (233), սելավանման (238), ինգիղ (239), աղիղ (263), բոխշա (266), վակզալ (266), չորբա (206), թյուքան (266), մխի գլուխ (117) և այլն: Հեղինակը սրանց մի մասը ընդգծում է կամ դործածում չափերտներով, շեշտելով, որ դա մի պատահիկ է հերոսների խոսքից:

Օտար բառերի մի մասը հեղինակը բերում է ժողովրդական արտասանության մեջ՝ առանց վերջնական կա-ի: Սրանք ճնշող մեծամասնություն մեզ այն բառերն են, որ մեր լեզվի մեջ անցել են ուսերենից կամ եվրոպական լեզուներից: Իր խոսքը հերոսների մտածելակերպին առավել մոտեցնելու կամ հերոսի սինմիչական խոսքի պատրանք ստեղծելու համար հեղինակը այդ բառերը բերում է հայացված (ժողովրդական) ձևով: Օրինակ՝ «...հաղաքում կան... քիչ թե շատ նշանավոր և աննշան կենտրոններ, ինչպիսիք են՝ հիվանդանոցը, քաղաքային ակումբը, տղայոց գիմնազը, իգական գիմնազը...» (էջ 38), «Սակայն խանութի լայն վիտրինի աջ և ձախ կողմը կպցրած կային երկու ուրիշ ցուցանակներ...» (էջ 50), «...էսօր կանուխ չէ եկե» (205), «Հաջորդ օրվանից, փոքրիկ սեղանի դեմը կանգնած, հաց ու կալբաս էր ծախում վակզալի մեյդանում Մեռելի Նոթը...» (էջ 106), «Ինչպես պատմության դասագրքից հանած գրավյուր...» (էջ 99), «...Եվ ահա ժնկում, եվրոպի մեջտեղում...» (էջ 110), «Երկար, սև, խունացած շուխի առանց այդ էլ բորբոսնած փեշերը քսվում էին փողոցի փողուն» (էջ 105): Բոլոր ընդգծված բառերը, որոնք գործածված են առանց ա վերջնահնչյունի, հեղինակին հնարավորություն են տրվել դեպքերը նկարագրել այս կամ այն հերոսի տեսանկյունից: Բնորոշ է, որ նշված օրինակներից միայն վերջինն է արևելյան լեզվից (թուրքերենից) անցած բառ (չուխա): Մնացածը ուսերեն են կամ ուսերենի միջոցով անցել են եվրոպական լեզուներից:

Հեղինակի ոճավորված լեզվում կան նաև բառեր, որոնք ժողովրդական կաղմություններ են կամ բերված են բարբառային հնչյունափոխություններից. «Անփաշ» պանիր (43), անլվա (66), պարտքնտեր (87), աջողակ (103), աբլակատ (148), անգնություններ (29), էդ (31), ամենահետընկած (32), ոսատառ (209), խլնքոտ (235), ոսացած (233), փինթի (247), ետի կողմից (266) և այլն:

Հայտնի է, որ Կ մասնիկը արդի հայերենում որոշ բառերի մեջ պահպանել է գրաբարյան հոգնակիակերտ դերը (ցի, -ացի ածանցն ունեցող բառերում): Այն գործում է նաև մի քանի այլ դեպքերում: Սակայն տվյալ դեպքում էա-

Նախաին խոսքը հեղինակի ոճավորված խոսքից, մանավանդ եթե նկատի ունենանք, որ հեղինակն իր խոսքը ոճավորում է նմանակելով ոչ միայն իր հերոսներին, այլև այս կամ այն կերպ մտածողներին՝ մի դեպքում վերամբարձ ներքողի ձևով, մի այլ դեպքում՝ միամիտ դավաճու մտածելակերպով և այլն:

կանն այն է, որ հիշյալ ձևերը իրենց կենսունակությունը պահպանել են բարբառներում և դրանց միջոցով անցել գրական լեզվին, վերջինիս հաղորդելով ժողովրդական երանգ։ Իսկ այն դեպքերում, երբ այդ բառերը գրաբարից ավանդվել են քարացած ձևով (բ-ով, բայց առանց հոգնակիության. օր. ձեռք, ոտք և այլն), ապա Բ մասնիկի բացակայությունը կարող է խոսքին տալ ժողովրդայնություն։ Ահա օրինակ. «...Անհայտ շարագործների ձեռով շանսատակ եղած...» (251)։ Փ մասնիկը նույնպիսի երանգ ունի նաև այն դեպքերում, երբ գոյականակերտ դեր է կատարում՝ ինչպես օրինակ, աշունք, զարունք։ Այս դեպքում նա ստեղծում է ժողովրդական բառաձևեր, թեև առկա է նաև հակառակը. ստեղծում է խիստ գրական բառեր։ Ահա նման կիրառություն վեպից. «Առջևից, զնացի ավանդարդը կաղմելով, գնում է սովորաբար զզզված մի մշակ...» (էջ 65)։ Բերենք բառերի մի քանի նմուշ «Երկիր Նաիրի» վեպի հեղինակային ոճավորված խոսքից, ուր Բ մասնիկը բառին հաղորդում է ժողովրդական գունավորում։ «...Կարծելով, երևի, որ հարբած են «տղեր-բը» — վեր նետեց թղթերը...» (էջ 85)։ «Ահա թե ինչու ոչ մի քաղաքացի չի համարձակվում լողանալ կամուրջի մոտերից» (էջ 21)։ «...Ամեն մի իսկական նաիրցի իսկույն պետք է հիշի Վարդան զորավար քաջին և ամրապնդվի պապերի հավատով» (էջ 21)։ «Իրերի անհայտ բերմունքով, երկու-երեք ամսով եղել է Բեռլինում» (էջ 17)։ «...Հառաչեց դահլիճը հիացից ու ահից» (էջ 155)։ Բոլոր ընդգծված օրինակներում Բ մասնիկն ստեղծում է ժողովրդական բառաձևեր։

Հարադիր բառերի ուշագրավ գործածության ենք հանդիպում առավելաբար հեղինակի ոճավորված խոսքում։ Բացի բայական հարադիրներից, որոնք չափազանց տարածված են, Չարենցը ստեղծում է այնպիսի հարադրություններ, որոնք միավորում են երկու, արտաբուստ տարբեր հասկացություններ, և որոնք միասին արտահայտում են բոլորովին նոր իմաստ։ «...Երեք տուն այն կողմը — այն պալատ-շինությունն է...» (էջ 42)։ «Մի ամիս միայն Մառառիկի նշանի տնտեսականը կարողացավ դիմանալ գործիչ-ընկերների բարձրապատիվ գրոհին» (էջ 51)։ «Բայց քաղաքը, բացի այդ հրաշք-շինությունից, ուներ մի շարք տեղական հրաշալիքներ...» (էջ 17)։ «...Այսպես էր գրել ռազմաճակատից ուղարկած իր նամակ-հրահանգում Մազուկի Համոն» (էջ 251)։

Երբեմն հեղինակը բառի հոգնակին օգտագործում է եղակիի իմաստով, որը չափազանց բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությանը. «...Լսել էին, որ մի բան պատահել է ներսերում...» (էջ 201)։

Հեղինակի ոճավորված խոսքին ժողովրդական գունավորում տալուն նըպաստում են նաև այն բազմաթիվ դարձվածները, առածներն ու ասացվածքները, որոնք տեղին և նպատակասլաց օգտագործել է հեղինակը։ Ծիշտ է, բուն հեղինակային խոսքում ևս հանդիպում են նման դարձվածաբանական միավորներ, որոնք, սակայն, ունեն այլ նպատակ և ուղղվածություն։ Այսպիսի դեպքերում հեղինակը դարձվածներին, ասացվածքներին, թեև վոր խոսքերին դիմում է խոսքի զգացմունքային երանգն ու ժեղացնելու, երբեմն էլ ընթերցողի հետ պարզ, անպաճույճ խոսակցություն վարելու համար։ Այնուամենայնիվ, դրանք անհամեմատ նվազ թիվ են կազմում բուն հեղինակային խոսքում։ Ահա մի քանի օրինակ. «ձեռք քաշել» (54), աշխարհիս երեսին (54), իսկ եթե, բան է, չգտար (13), միս ու մարմին առնել (189), քթի տակ էր գտնվում (189), զարմանի տակը ջուր էր (219), քափ ու քրտինք կտրած (235). սիրտը խորով-

վի (237), շունչը փչել (243), թքելով ու մրելով (250)։ Մինչդեռ հեղինակի ոճավորված խոսքում հանդիպող օրինակները նպատակ ունեն խոսքի միջոցով անհատականացնել հերոսներին։ Ահա թե ինչպես է հեղինակը «վերապատմում» Մաղութի Համոյի ճառը վարսավիր Վասիլի ընկալմամբ. «Չմոռացավ հայտնել նաև Մաղութի Համոն գավառապետի պատմած այն կարևոր հանգամանքը, որ մեր ամենակարող թագավոր-կայսրը Բանիցս անգամենի հեռագիր է խփել Վիհելմին՝ առաջարկելով հաշտ-խաղաղ վերջացնել ծագած թյուրիմացությունը» (էջ 87)։

Այս հատվածում խոսքի ժողովրդայնությունը առաջանում է հարադիրների հմուտ գործածությամբ (թագավոր-կայսր, հաշտ-խաղաղ), որի մասին արդեն խոսել ենք, ինչպես նաև Բանիցս անգամենի և հեռագիր խփել արտահայտությունների շնորհիվ։ Անհնար էր, թերևս, առավել դիպուկ բնութագրել թերուս հերոսի մտածելակերպը. Մաղութի Համոյի ճառը լսելուց հետո նրա մտքում մնում են ինչ-որ պատառիկներ, որոնք և ստանում են լեզվական յուրովի գործածություն։

Մաղութի Համոն բոլոր նշանավոր և աննշան իրադարձությունների կենտրոնում է, նա է ուղղություն տալիս բոլոր մտքերին. այսպես են մտածում նրա մասին հասարակ նախրցիները. «Ի՞նչ պիտի աներ, ասացեք խնդրեմ, նախրյան այդ քաղաքը, եթե չլիներ Համո Համբարձումովիչը, այդ «Լույսի» կառավարիչ Մաղութի Համոն։ Կկորչեր, ոտնատակ կլիներ՝ կքաղվեր տգիտության անսահման խավարում։ Ամեն տեղ նա էր, ամեն դժվարին դեպքում նա պիտի, միայն նա, սալլը ցեխից հաներ» (էջ 91)։ Այս հատվածում «կկորչեր, ոտնատակ կլիներ, կթաղվեր տգիտության խավարում» և «սալլը ցեխից հաներ» դարձվածաբանական միավորների շնորհիվ ստեղծվում է հերոսի խոսքի պատրանք, թեև իրականում պատմում է հեղինակը։

Ահա և դարձվածների կիրառության այլ դեպքեր հեղինակի ոճավորված խոսքում. «...Չարչիներն ավելորդ էին համարել «գործից էղներ...» (էջ 170)։ «Գլխի ընկավ նա, որ «ձեռ է առել» իշեն վարսավիր Վասիլը» (էջ 128)։ «...Մատ ունի նաև ընկ. Վառդյանը» (էջ 210), «Սերգե Կասպարիչի ձեռքերի գործն էր այդ» (էջ 210), «Չտեսնված լեզու ուներ այդ ծամը կտրած օրիորդը...» (էջ 219), «Անունն ի՞նչ դենեմ» (ինչո՞վ բացատրենք— էջ 233), «Ջանսատակ եղած» (էջ 251), «գլխահան էին անում» (էջ 233), «ծայր չկար» (էջ 264), «էլ կտրած» (էջ 252), խելի գլխին է» (էջ 261) և այլն։ Վերոհիշյալ բոլոր օրինակներում էլ դարձվածները թարմություն, կենդանություն, աշխուժություն են հաղորդում խոսքին, առանց որոնց այն կլիներ նվաղ տպավորիչ։

Առածներն ու ասացվածքները ևս ժողովրդական խոսքի կենդանի ու ամենից կենարար երակներն են։ Խոսքի մեջ դրանց դիպուկ գործածությունը անգնահատելի դեր ունի և հաճախ փոխարինում է ևրկարաշունչ համեմատություններին ու մեկնաբանություններին։ Թվենք հեղինակի խոսքում հանդիպող առած-ասացվածքներից մի քանիսը. «Ասեղի տեղ չկար» (էջ 267), «Քթներն ամեն տեղ խոթելով՝ ջուր էին ուղտորում, որ ձուկ որսան» (էջ 235), «Յուղիլ եմ զլուխդ» (էջ 183), «Մի մատ յուղ դառնալ» (147), «Ականջները դեմ էին տվել սատանի ջրաղացի, ոչ ջուր էր լցվում ականջները, ոչ մտքի հատիկ» (էջ 140), «Ի՞նչ շունն էր, որ շիմանար» (էջ 95), «էշը ցեխից հանել» (201), «Չիք չարիք առանց բարյաց» (էջ 40), «Երկու անգամ երկու հավասար է շորսի պես պարզ էր...» (էջ 34), «Պերպերի լեզու-բազնիքի դուռ» (էջ 98)։

Ինչպես տեսնում ենք, Չարենցը հաճախ ձևափոխում է հանրահայտ արտահայտությունները, իսկ մի-երկու տեղ էլ թարգմանաբար օգտագործում է ռուսական առածներ. «Կուզիկի մեջքը միայն գերեզմանը կշտկի» (էջ 9), «Զիք ծուխ առանց կրակի» (էջ 220):

«Երկիր Նաիրի» վեպում գործող բազմաթիվ հերոսներ հեղինակի կողմից ստացել են զանազան լրացուցիչ անվանումներ՝ «խոսուն» անուններ: Դրանք (ինչպես նաև տեղանունները) կազմված են ժողովրդական մտածողությանը հատուկ ձևերով՝ անունների կրճատմամբ, հավելումով, արտաքինը, զբաղմունքը, աշխարհայացքը բնութագրող սրամիտ մակդիրներով, որոնք նպաստում են խոսքի ժողովրդա-խոսակցական երանգավորմանը: Ժողովուրդը Համալսարանը դարձնում է Համո, Թադևոսը՝ Թաթոս, Հարությունը՝ Արութ, Սերյեյը՝ Սերգե և այլն, դրանց կցելով այս կամ այն մակդիրը. Մազութի Համո, Տեր Հուսիկ քահանա-խաչագող, Քաչալ Թաթոս, Մշեցի Թաթո, Շլոո, Չիլ Մուկուշ, Արամ Անտոնիշ-«Փուքս», Անգինա Բարսեղովնա և այլն: Տեղանուններից մի քանիսը ևս կրում են ժողովրդական անվանումներ՝ Կատինդար, Ռաստով, «Վարդանի կամուրջ», «Սլլան քար», «Ճգնավորի մատուռ», Առաքելոց եկեղեցի:

Ուշագրավ է, որ Չարենցը տեղանուններում, ինչպես նաև մի շարք այլ դեպքերում ստեղծում է գոյական որոշիչներ սեռական հոլովով, որը, ինչ խոսք, առավել բնորոշ է ժողովրդական խոսելաձևին (Վարդանի կամուրջ, ճգնավորի մատուռ, Մեռելի Ենոք, կառքի փող, ձեռքի փող և այլն): Ակնհայտ է, որ հիշյալ օրինակներում գերիշխում է վերաբերական իմաստը:

Ինչպես տեսանք, Չարենցի «Երկիր Նաիրի» վեպում լեզվի ժողովրդա-խոսակցական տարրերը օգտագործված են մեծ վարպետությամբ, տեղին ու ճաշակով:

НАРОДНО-РАЗГОВОРНЫЕ ЭЛЕМЕНТЫ В РОМАНЕ Е. ЧАРЕНЦА «СТРАНА НАИРИ»

Р. К. САКАПЕТОЯН

(Резюме)

В статье рассматриваются народно-разговорные элементы языка романа Егише Чаренца «Страна Наири». Отмечаются сугубо авторская речь и стилизованная речь автора. Сугубо авторская речь представляет «нейтральный» стиль, в основном встречающийся в лирических отступлениях. Хотя повествование ведется автором, но его стилизованная речь проникнута мышлением и манерой речи героев. Часто в стилизованную речь автора проникают свойственные тем или другим героям слова и выражения, которые автор подчеркивает или берет в кавычки. Разновидность авторской речи занимает промежуточную позицию между сугубо авторской речью и прямой речью героев. Поэтому эта разновидность имеет существенные различия в аспекте применения народно-разговорных элементов языка.

В первой разновидности авторского языка рассматриваются следующие элементы, придающие речи народный оттенок: а) предпочтение ав-

тором народно-диалектных форм слов, имеющих свои адекватные в литературном языке; б) иноязычные заимствования (в основном из восточных языков), проникшие в литературный язык через диалекты; в) специфические формы, свойственные народному языковому мышлению: разные словосочетания, сопоставления, звукоподражательные слова; г) употребление слов, принадлежащих к разным склонениям, в склонении «Ի».

В стилизированной речи автора, кроме выявленных особенностей, рассматриваются также сопоставления разного характера, встречающиеся только в этой разновидности авторской речи. Отмечаются такие фигуры, свойственные народно-разговорному языку, как синекдоха, перифраза, а также многочисленные пословицы, поговорки и крылатые слова.

Все эти языковые средства, которые употреблены с целью индивидуализации героев и создания колорита места и времени, одновременно выявляют внутреннее богатство армянского языка.